www.mediaforedu.am
Տեղեկատվական-վերլուծական կայք
Երևան, Հայաստան

ՀՀ ԿԳՄՍ նախարար
Ժաննա Անդրեասյանին

Հարցում

Հարգելի տիկին Անդրեասյան,

Հունիսի 24-ին Հայաստանի բոլոր մարզերի և Երևանի հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանցիներն առաջին անգամ հանձնեցին ինտեգրված էսսեի քննություն պատմությունից և գրականությունից:

Խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք ԿԳՄՍ նախարարությունը 2026 թվականի 9-րդ դասարանի պատմությունից և գրականությունից ինտեգրված էսսեի համապետական քննությունից հետո իրականացրել է քննության արդյունքների, կազմակերպման և արդյունավետության ուսումնասիրություն կամ վերլուծություն:

2. Եթե առաջին հարցի պատասխանը դրական է, ապա ի՞նչ հիմնական եզրակացությունների է հանգել նախարարությունը: Ի՞նչ ուժեղ և թույլ կողմեր, ի՞նչ խնդիրներ են արձանագրվել ուսումնասիրությամբ:

3. Եթե նման ուսումնասիրություն կամ վերլուծություն դեռևս չի իրականացվել, արդյո՞ք այն նախատեսվում է իրականացնել: Եթե այո, ապա ի՞նչ ժամկետներում և ի՞նչ մեթոդաբանությամբ:

4. Ինչպե՞ս են ուսումնասիրության (կամ նախատեսվող ուսումնասիրության) արդյունքները հաշվի առնվելու 2027 թվականի 9-րդ դասարանի ինտեգրված էսսեի քննության ձևաչափի, գնահատման կարգի կամ կազմակերպման գործընթացի բարելավման ընթացքում:

5. Եթե նախարարությունն իրականացրել է նման ուսումնասիրություն, խնդրում եմ արդյունքները, ամփոփ հաշվետվությունը կամ համապատասխան վերլուծական փաստաթղթերը տրամադրել mediaforedu.am-ին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, եթե չկա օրենքով սահմանված երկարաձգման հիմք: Խնդրում եմ հայցվող պատասխանները տրամադրել համարակալված, հստակ եւ վերջնական, ամբողջական պատասխանի պահանջներին համապատասխան:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ուղարկում mediaforedu.am տեղեկատվական–վերլուծական կայքի՝ ս.թ. հունիսի 24-ին իրականացրած նախնական հարցման պատասխաններն ամփոփող հրապարակման հղումը, որը գուցե օգտակար լինի նախարարությանը նոր քննաձևի, սովորողների պատրաստվածության, ինչպես նաև քննության հետագա կիրառման վերաբերյալ ուսուցիչների գնահատականներին ծանոթանալու առումով:

Կանխավ շնորհակալություն ամբողջական պատասխանի համար:

Հարգանքով

Անուշ Մարտիրոսյան

mediaforedu.am տեղեկատվական – վերլուծական կայքի խմբագիր

24.07.2026 թ.